ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 մայիսի 2016 թվականի N 44-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ <<ԼԱՎԱԳՈՒՅՆ ՏՆՕՐԵՆ>>, <<ԼԱՎԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՑԻՉ>>, <<ԼԱՎԱԳՈՒՅՆ ԴԱՍՏԻԱՐԱԿ>> ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՓՈՒԼԸ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Կրթության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի <<Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին>> ՆՀ--728 հրամանագրի 1.6 կետի գ) և 1.16 կետի ա) ենթակետերի դրույթներով, համաձայն Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2013 թվականի դեկտեմբերի 5-ի N 1354-Ն հրամանի պահանջների՝ **ո ր ո շ ո ւ մ ե մ.**

1. ՀՀ Սյունիքի մարզում 2016 թվականի մայիսի 19-ին անցկացնել <<Տարվա լավագույն տնօրեն>>, <<Տարվա լավագույն ուսուցիչ>>, <<Տարվա լավագույն դաստիարակ>> մրցույթների մարզային փուլը:
2.Հաստատել մրցույթների արդյունքները գնահատող մարզային հանձնաժողովի կազմը՝ համաձայն N1- N3 հավելվածների :
3.Հանձնաժողովին՝ մրցույթի մարզային փուլի նախապատրաստման, անցկացման աշխատանքները իրականացնել համաձայն սահմանված կարգի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ՝ Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2016թ. հունվարի 16
ք. Կապան